ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2013 թվականի N 161-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի <<Սյունիքի մարզպետի խորհրդանշանքի ձևեր հաստատելու մասին>> N 7 որոշմամբ, համաձայն <<Կապանի արվեստի պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպության 29.10.2013թ N 81 գրավոր առաջարկության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայ երաժշտական արվեստի զարգացման բնագավառում ներդրած մեծ ավանդի, երիտասարդության գեղագիտական դաստիարակության և երաժշտական կրթության գործում ունեցած վաստակի ու ծննդյան 75-ամյակի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Ժողովրդական արտիստ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, քանոնահարուհի Անժելա Երվանդի Աթաբեկյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. նոյեմբերի 5
ք. Կապան